ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

12.05.2021 թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԽ նախագահ Լ. Մադաթյանը, ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ Ի. Վարդանյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Ա. Խոջումյանը, Ա. Ղարախանյանը: Նիստը անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահն է Գ. Ավետիսյանը, քարտուղարը՝ Ա. Ալեքսանյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Գ. Ավետիսյանը:

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների արդյունքների ամփոփում/ Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
2. Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների ներկայացում/ Զեկ.Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:
3. Հաղորդում II կիսամյակի II ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ/ Զեկ. Գ. Ավետիսյան/:
4. I-III կուրսերի II կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի հաստատում/ Զեկ. Գ. Ավետիսյան/:
5. Ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական աշխատանքային պլանների քննարկում և հաստատում/2021- 2022//Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

Բաց քվեարկությամբ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում՝ 8/1

¬ Հաստատել նիստի օրակարգը:

1. *Լսեցին.- Ֆակուլտետի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների ամփոփման մասին /Զեկ.Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան /:*

Լսեցին- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ Մ. Միքայելյանին

Մ. Միքայելյանը ներկայացրեց ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքները: Նա նշեց, որ ուսանողի կողմից բակալավրի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ: Այդ իսկ պատճառով կարևոր է ավարտական աշխատանքների նախապաշտպանության կազմակերպումը և անցկացումը: Մ. Միքայելյանը նշեց, որ մայիսի 11-ին անց է կացվել ավարտական աշխատանքների նախապաշտպանություն, որին մասնակցում էին ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչը, կրթական ծրագրի ղեկավարը և ավարտական աշխատանքների ղեկավարները: Ավարտական աշխատանքների ղեկավարները համաձայն հաստատված գրաֆիկի կատարել են խորհրդատվություններ և այս պահի դրությամբ ուսանողների մեծ մասի աշխատանքները ժամանակացույցին համապատասխան են ընթանում: Ամբիոնի վարիչը նշեց, որ համաձայն մասնաճյուղի կողմից սահմանված կարգի ավարտական աշխատանքները, ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ ենթակա են գրախոսման: Ամբիոնը հաստատել է գրախոսների ցուցակը: Գրախոսությունները պատրաստ պետք է լինեն պաշտպանությունից առնվազը 5 օր առաջ:

Լսեցին.-Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ Գ Հովհաննիսյանին

Ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց, որ «Զբոսաշրջություն» մասնագիտության ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը անց է կացվել ժամանակացույցին համապատասխան /մայիսի 8-ին/: Նախապաշտպանությունը անցկացվեց ֆակուլտետի տուրիզմի կառավարման և

մշակութաբանության ամբիոնի վարիչի, կրթական ծրագիր պատասխանատուի և ավարտական աշխատանքների ղեկավարների մասնակցությամբ, որը հնարավորություն տվեց առկա խնդիրներից շատերը լուծել տեղում: Անհատապես բոլորին նշվեցին աշխատանքներում առկա թերությունները և տրվեցին խորհրդատվություն դրանց վերացման ուղղությանբ:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ համաձայն մասնաճյուղի կողմից սահմանված կարգի ավարտական աշխատանքները, ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ ենթակա են գրախոսման: Ամբիոնը հաստատել է գրախոսների ցուցակը: Գրախոսությունները պատրաստ պետք է լինեն պաշտպանությունից առնվազը 5 օր առաջ:

Արտահայտվեցին.- Ա. Պոտոսյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Ֆակուլտետի «ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» ԿԾ-երի ավարտական կուրսերին տրամադրել մեկ շաբաթ/մինչև ս/թ մայիսի 18/ ավարտական աշխատանքներում առկա բոլոր թերությունները վերացնելու և ամբիոն ներկայացնելու համար:

2. Լսեցին.- Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների մասին/ Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:

Ա. Սարիբեկյանը հաղորդեց, որ 2021-2025 թթ. «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագիրում կատարվել են մի շարք փոփոխություններ. մշակվել են կրթական ծրագրի նոր մոդուլներ, վերանայվել են մաթեմատիկական դասընթացների թեմաներ և որոշ դասընթացների վերջնարդյունքներ:

ԵՊՀ ԻՄ տնօրենի 8/2 հրամանի համաձայն ԿԲԴՎ բաժին 2021-2025 կրթական ծրագրիրը պետք է ներկայացվեր մինչև մայիսի 21-ը: Նշված ժամկետում կրթական ծրագիրը բոլոր փոփոխություններով ներկայացված է:

Նշեմ, որ վերանայման խմբի բոլոր անդամները մեծ պատասխանատվությամբ քննարկել են բոլոր հնարավոր փոփոխությունները և կատարել անհրաժեշտ աշխատանքներ դրանք հիմնավորելու համար:

Ա. Ուլիխանյանը նշեց, որ «Զբոսաշրջություն» մասնագիտության կրթական ծրագրի վերանայման նպատակով, համաձայն ժամանակացույցի, կազմակերպվել են աշխատանքային խմբի հանդիպումներ, ինչպես նաև քննարկումներ ուսանողների և ամբիոնի բոլոր դասախոսների հետ: Հանդիպումների ընթացքում եղել են առաջարկություններ, որոնք քննարկվել են և հիմնավորված առաջարկների հիման վրա կրթական ծրագրում կատարվել են որոշ փոփոխություններ:

Կրթական ծրագրի պատասխանատուները արժևորեցին աշխատանքային խմբի համագործակցումը արտաքին շահակիցների հետ:

Արտահայտվեցին.- Գ. Հովհաննիսյանը, Մ. Միքայելյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. Լսեցին.- Հաղորդում II կիսամյակի II ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Դեկանի պաշտոնակարաը հաղորդեց, որ II կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում են կազմակերպել /I-III կուրսեր/ հիբրիդային տարբերակով ս/թ մայիսի 29-ից հունիսի 5-ը ընկած

ժամանակահատվածում: Ընդ որում այդ նույն ժամանակահատվածում կազմակերպվելու են նաև ստուգարքները: Համապատասխան ամբիոնները նախապես հստակեցրել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ձևերը և սահմանված ժամկետներում պահանջել տոմսերը, թեստերի նմուշները: Դասախոսների և ուսանողների հետ համատեղ քննարկումներով կազմվել են բոլոր ժամանակացույցերը և ներկայացվել է ՈՒՄՎ հաստատման, որից հետո տրամադրվել է ուսանողներին, դասախոսներին, մասնաճյուղի կայքին: Ֆակուլտետում կազմակերպվելու է 16 ընթացիկ քննություն, որից վեցը կիրականացվի հեռավար, 12 ընթացիկ ստուգումներ, որից չորսը կլինի հեռավար: 6 դասընթաց հետազոտական բաղադրիչով են:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- II կիսամյակի II ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքներ մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. Լսեցին.- I-III կուրսերի II կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի հաստատման մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը հաղորդեց, որ I-III կուրսերի II կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցերը սահմանված ժամկետներում կազմվել է և ներկայացվել ՈՒՄՎ: Բոլոր օրերը նախորոք համաձայնեցվել են և դասախոսների, և ուսանողների հետ:

Քննաշրջանը նախատեսվում է կազմակերպել ս/թ հունիսի 7-ից մինչև 26 ընկած ժամանակահատվածում ըստ հաստատված ժամանակացույցի:

Արտահայտվեցին.- Ա. Եգանյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշում.- Հաստատել I-III կուրսերի II կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

5. Լսեցին.- Ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական աշխատանքային պլանների քննարկման և հաստատման մասին /2021- 2022//Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

Մ. Միքայելյանը նշեց, որ 2021-2022 ուստարվա «Ֆինանսներ» մասնագիտության աշխատանքային ուսումնական պլանը կազմվել է ելնելով նախորդ տարիների ուսումնական պլաններից: 2021-2022 աշխատանքային ուսումնական պլանների ժամանակին քննարկման և հաստատման հարցը շատ կարևոր է ամբիոնի աշխատանքների կազմակերպման համար, որովհետև դրա հիման վրա պետք է անմիջապես սկսել ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունների աշխատանքները: Նա նշեց, որ 2021-2022 աշխատանքային ուսումնական պլանների նախագիծն ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող նորմատիվային պահանջներին և կարելի է ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ 2021-2022 ուստարվա «Զբոսաշրջություն» մասնագիտության աշխատանքային ուսումնական պլանը կազմվել է ելնելով նախորդ տարիների ուսումնական պլաններից և ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող նորմատիվային պահանջներին:

Սակայն ամբիոնների վարիչները նշեցին, որ 2021-2022 ուստարվա աշխատանքային պալններում պայմանավորված այն դասընթացներով,որոնք ունեն հետազոտական բաղադրիչ, կան որոշակի շտկումների անհրաժեշտություն և առաջարկեցին հաստատել վերապահումով:

Արտահայտվեցին – Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.9 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. – Հաստատել ֆակուլտետի «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների 2021-2022 ուստարվա ուսումնական աշխատանքային պլանների նախագծերը:

Գիտական խորհրդի նախագահ՝ *Գ. Ավետիսյան*
Քարտուղար՝ *Ա. Ալեքսանյան*